ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1534 - Ն

ԱՅՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԸ, ՈՐՈՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ Է ԲԱԶՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ, ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ԴՐԱՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԸ

Հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ մաքսատուրքերի, հարկերի ընդհանուր չափը, որոնց վճարման պարտավորության կատարումն ապահովվում է բազմակի ապահովմամբ, կարող է գերազանցել դրանով ներկայացվող ապահովման չափը հետևյալ դեպքերում և հետևյալ պայմանների ապահովման դեպքում՝

1) ապրանքների հայտարարատուին տրամադրված է լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ.

2) ապրանքների հայտարարատուին տրամադրված է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր՝ հայտարարատուի համար օրինապահ հարկ վճարողի հավաստագրի՝ նախկինում դադարեցված չլինելու պայմանով.

3) ապրանքների հայտարարատուին տրամադրված է «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված՝ գործող օրինապահության հավաստագիր՝

հայտարարատուի համար հավաստագրի՝ նախկինում դադարեցված չլինելու պայմանով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դեպքերում մաքսատուրքի և հարկերի ընդհանուր գումարը կարող է գերազանցել մաքսատուրքի և հարկերի վճարման պարտավորությունների կատարման ապահովման համար հայտարարատուի կողմից ներկայացված բազմակի ապահովման չափը՝ ոչ ավելի, քան հիսուն տոկոսով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ